ՀՀ ԳԱԱ Ա. Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրվեց Ջոն Կարապետյանը

Հունվարի 30-ի ՀՀ ԳԱԱ նախագահության նիստում ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի տնօրենի պաշտոնում միաձայն վերընտրվեց Ջոն Կարապետյանը:

Ջոն Կարապետյանը ծնվել է 1982 թ.-ին՝ Գյումրիում: Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանն ավարտելուց հետո սկսել է աշխատել ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտում:

Ջոն Կարապետյանը ինստիտուտի տնօրենի պաշտոնը զբաղեցնում է 2013 թ.-ից: Նա 55 գիտական աշխատությունների և մեկ պատենտի հեղինակ է: Նրա գիտական գործունեության ոլորտը ներառում է՝ երկրաֆիզիկա, ինժեներային սեյսմաբանություն, սեյսմակայուն շինարարություն, երկրաֆիզիկական սարքաշինություն. սեյսմիկ վտանգի ու ռիսկի գնահատման մեթոդների, սեյսմիկ սանդղակների մշակում և կատարելագործում:

Ջոն Կարապետյանը ճանաչվել է Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի կողմից 2011 թ.-ին հայտարարված «Լավագույն գիտական աշխատանք» մրցանակաբաշխության դափնեկիր երկրաբանություն անվանակարգում:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն